ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

ի պատասխան Ձեր 12.06.2024թ. հ.154-2024թ. գրության՝ Գ. Նժդեհի փողոց հ.56ա շենքի թիվ 627 բնակարանն Էլմիրա Վարդանյանի ընտանիքին հատկացնելու հարցի վերաբերյալ, տեղեկացվում է.

Սոցիալական անապահով և կարիքավոր ընտանիքների բակարանների կամ բնակության համար պիտանի տարածքների տրամադրման համար հստակ չափորոշիչներ սահմանված չեն:

Երևանի քաղաքապետարանը ստանում է բազմաթիվ դիմումներ սոցիալապես անապահով, կարիքավոր, հաշմանդամ կամ բազմազավակ ընտանիքների կողմից բնակարան կամ բնակության համար տարածք տրամադրելու վերաբերյալ, սակայն վերջիններիս կողմից բարձրացված հարցերը հնարավոր չեն եղել կարգավորել բնակարանային ֆոնդի բացակայության պատճառով:

Երևան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը անհատույց օգտագործման կամ անհատույց օտարման հարցերը կարգավորվում են Երևան քաղաքի ավագանու 26.12.2023թ. «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2024 թվականի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության)» հ.50-Ն որոշման դրույթներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ